«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ Հ.ՄԵՂԱՊԱՐՏԻ ՓՈՂՈՑԻ 8 ՇԵՆՔԻ ԹԻՎ 18 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-22/01

h. Ստեփանավան «30» մարտի 2022 թ.

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկը, ի դեմս համայնքի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լիմերթ»ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ.Խաչատրյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված կնքել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Հ.Մեղապարտի փողոցի 8 շենքի թիվ 18 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, հասարակական նշանակության տարածքի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 30 օրացուցայի օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի

...ցքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր
...վին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:
...վին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում պահիովման գործողության ընթացքում լուծարման
3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման
կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման
արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի
և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն
Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը
ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով
(գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի
«Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում
Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային
ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը
տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի
հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն
պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված
20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով
Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա
ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի
պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի
4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է
վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած
բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման
իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է
պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված
աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և
պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն
էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված
հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի
աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին
չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման
համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն
պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ
աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի
ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-
ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական
կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի
N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով)
կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության
կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը
Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված
շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու
ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների)
համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման
արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 4799540(չորս միլիոն յոթ հարյուր իննսունինը հազար հինգ հարյուր քառասուն) ՀՀ դրամ : Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3

---

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

...ք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես ...ոյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի

…ելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը …ակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված …հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ	«Լիմհերթ»ՍՊԸ
հ.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1	ք.Ստեփանավան Ռաֆֆի 12
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	ԱՇԲ Ստեփանավանի մ/ճ
հ/հ900252101440	հ/հ2471400577270010
ՀՎՀՀ 06954104	ՀՎՀՀ07203843
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«30 » մարտի 2022 թ. կնքված
ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-22/01 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Հ.Մեղապարտի փողոցի 8 շենքի թիվ 18 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, հասարակական նշանակության տարածքի հիմնանորոգման աշխատանքների

N/N ը/կ	Աշխատանքի անվանումը	Չափման միավոր	Քանակ	1 միավ. ընդ.արժ. հազ.դր.	Ընդհանուր արժեքը հազ. դր.
1	2	3	4	5	6
	Պատի կտրվածք "Ա" և "Բ" առանցքներով, միջնորմներ				
1	Ե/բ միաձույլ բարավորի կառուցում Վ - 15 բետոնից	մ³	0,12	45,0	5,40
2	Ամրան A - 240c 6մմ	տն	0,00276	400,0	1,10
3	Ամրան A - 500c 12մմ	տն	0,00696	400,0	2,78
4	Պատի շար սրբատաշ տուֆ քարով	մ²	2	25,0	50,00
5	Ետնամասի շարվածք կանոնավոր ձևի տուֆ քարով	մ³	0,6	35,0	21,00
6	Պատի շարվածքի ամրանավորում	տն	0,0033	400,0	1,32
7	Գոյություն ունեցող միջնորմների d=100մմ քանդում	100մ²	0,205	50,0	10,25
8	Շին աղբի հավաքում, դուրսբերում և բարձում ինքնաթափին ձեռքով	տն	3,7	0,6	2,22
9	Տեղափոխում 5 կմ	տն	3,7	1,5	5,55
10	Միաձույլ ե/բ գոտու կառուցում Վ - 15 դասի բետոնից	մ³	0,086	50,0	4,30
11	Ամրան Ա - 240C 6մմ	տն	0,00264	400,0	1,06
12	Ամրան Ա - 500C 12մմ	տն	0,00382	400,0	1,53
13	Միջնորմների կառուցում d=100մմ հաստ. բետոնե բլոկներից, կողային հատվածները լցնել էլաստիկ նյութով	մ³	1,4	40,0	56,00
14	Միջնորմների ամրանավորում ամրան Ա - 240C 8մմ	տն	0,01905	400,0	7,62
15	Կառուցվող բետոնե բլոկների անցքերի լցում թեթև Վ-7.5 բետոնով	մ³	0,33	40,0	13,20

	Հատակներ				
1	Փայտե հատակների քանդում	100մ²	0,262	50,0	13,10
2	Փայտե հատակների հիմնակմախքի քանդում	100մ²	0,262	8,0	2,10
3	Գոյություն ունեցող մանրահատակի քանդում	100մ²	0,268	50,0	13,40
4	Գոյություն ունեցող բետոնե հատակների քանդում	մ³	0,8	15,0	12,00
5	Գոյություն ունեցող ավազե նախաշերտի քանդում	մ²	40	0,2	8,00
6	Շին աղբի հավաքում, դուրսբերում և բարձում ինքնաթափին ձեռքով	տն	7,2	0,6	4,32
7	Տեղափոխում 5 կմ	տն	7,2	1,5	10,80
8	Խարամի նախաշերտի կառուցում 8սմ հաստությամբ	100մ²	0,5506	40,0	22,02
9	Ց/ա հարթեցուցիչ շերտի կառուցում 30մմ հաստ.	100մ²	0,5506	250,0	137,65
10	Թեթև բետոնե նախաշերտի կառուցում 80մմ հաստ.	100մ²	0,5506	60,0	33,04
11	Հատակների կառուցում կերամիկական սալիկներով	100մ²	0,0416	800,0	33,28
12	Լամինատե հատակների կառուցում 8մմ հաստ. սպունգով և շրիշակներով (10սմ բարձ.) , (33դասի, 5 կայունություն)	մ²	50,9	7,0	356,30
	Բացվածքներ				
1	Գոյություն ունեցող փայտե դռների ապամոնտաժում (5 հատ)	100մ²	0,129	50,0	6,45
2	Գոյություն ունեցող փայտե պատուհանների ապամոնտաժում (2 հատ)	100մ²	0,102	50,0	5,10
3	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում (բացվող), 4+4մմ երկշերտ ապակեփաթեթ, հայկական պրոֆիլ (սև գույն, 60մմ հաստ.)	մ²	2,72	50,0	136,00
4	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում (չբացվող), 4+4մմ երկշերտ ապակեփաթեթ, հայկական պրոֆիլ (սև գույն, 60մմ հաստ.)	մ²	8,84	45,0	397,80
5	Մետաղապլաստե դռների տեղադրում, հայկական արտադրություն, 4+4մմ (6սմ հաստ.)	մ²	1,47	50,0	73,50
6	Դուռ ՄԴՖ-ից, կաղնեգույն (1,89մ²)	հատ	2	60,0	120,00
7	Մետաղական դռան մոնտաժում և տեղադրում (կմախքը՝ տաշտաձև հեծաններից, ներսը՝ մետաական քառակուսի խողովակներից)	մ²	2,205	120,0	264,60
8	Պատուհանագոգերի տեղադրում (առանց նյութի արժեքի)	մ²	1,86	3,0	5,58

9	Պլաստմասե պատուհանագոգի տեղադրում 350մմ լայնքը (սև գույն)	գծմ	5,3	3,5	18,55
10	Գոյություն ունեցող մետաղական ճաղավանդակի յուղաներկում (2 անգամ)	100մ²	0,102	100,0	10,20
	Հարդարման աշխատանքներ				
1	Առաստաղների հարթեցում գիպսոնիտով	100մ²	1,67	114,0	190,38
2	Պատերի հարթեցում գիպսոնիտով	100մ²	0,51	114,0	58,14
3	Պատերի սվաղ գաջի շաղախով (լավորակ)	100մ²	0,198	250,0	49,50
4	Շեպերի սվաղ գաջի շաղախով (լավորակ)	100մ²	0,047	300,0	14,10
5	Պատերի սվաղում ց/ա շաղախով (լավորակ)	100մ²	0,1895	250,0	47,38
6	Առաստաղների ներկում լատեքսով (լավորակ) մածկապատումով	100մ²	0,51	100,0	51,00
7	Պատերի ներկում լատեքսով (լավորակ) մածկապատումով	100մ²	1,868	100,0	186,80
8	Շեպերի յուղաներկում (լավորակ)	100մ²	0,047	122,0	5,73
9	Պատերի երեսպատում կերամիկական՝սալիկներով H=2.4մ	100մ²	0,1895	800,0	151,60
10	Կախովի առաստաղի իրականացում ջրակայուն երկշերտ պլաստիկից, պրոֆիլներից կարկասի վրա	մ²	4,2	8,0	33,60
	Աստիճան և թեքահարթակ				
1	III կարգի բնահողի մշակում ձեռքով, բարձում ինքնաթափին	մ³	2,5	2,0	5,00
2	Բնահողի հետլիցք ձեռքով	մ³	0,8	1,25	1,00
3	Տեղափոխում 5կմ	տն	2,9	1,5	4,35
4	Բետոնի նախաշերտի կառուցում Վ - 7.5 բետոնից	մ³	0,4	40,0	16,00
5	Խճի նախաշերտի կառուցում	մ³	0,4	10,0	4,00
6	Բետոնե հիմքերի կառուցում Վ - 7.5 բետոնից (300մմ)	մ³	0,9	45,0	40,50
7	Բետոնե պատի կառուցում Վ - 12.5 բետոնից (200մմ)	մ³	0,84	45,0	37,80
8	Ավազակոպճային լիցք	մ³	2,2	10,0	22,00
9	Բետոնի նախաշերտի կառուցում Վ - 12.5 բետոնից, 100մմ հաստ.	մ³	0,97	45,0	43,65
10	Ցանցի ձգում (առանց նյութի արժեքի)	տն	0,0142	500,0	7,10
11	Ցանց Вр - 5 (200*200*5մմ)	մ²	9,75	1,2	11,70

12	Ց/ա հարթեցուցիչ շերտի կառուցում 30մմ հաստ.	100մ²	0,083	250,0	20,75
13	Բազալտե աստիճանների տեղադրում (300*150մմ)	մ	4,4	8,0	35,20
14	Աստիճանների և թեքահարթակի երեսպատում բազալտե սալերով H=30մմ	մ²	8,3	14,0	116,20
15	Պատերի երեսպատում բազալտե սալերով, 30մմ	մ²	5,1	15,0	76,50
16	Բազալտե գլխադիրների տեղադրում (առանց նյութի արժեքի)	մ²	2,85	15,0	42,75
17	Բազալտե գլխադիրներ , 300մմ լայն., 50մմ հաստ.	գծմ	9,5	7,0	66,50
18	Ալյումինե բռնաձող երեք ձողով արտադրված գործարանային պայմաններում	100մ	0,09	2000,0	180,00
19	Գոյություն ունեցող բազալտե աստիճանների քանդում (300*150մմ)	մ	22	0,6	13,20
	Հովհար				
1	Հովհարի կառուցում մետաղական խողովակներից	100մ²	0,2	350,0	70,00
2	Մետաղական խողովակ 40*20*2մմ ,	մ	66,6	1,2	79,92
3	Մետաղական անկյունակ 45*4մմ	մ	6	2,0	12,00
4	Դյուբել մեխ - 80մմ	հատ	36	0,03	1,08
5	Պոլիկարբոնատի տեղադրում	100մ²	0,20	750,0	150,00
	Ջուր, կոյուղի, էլեկտրականություն				
1	Գոյություն ունեցող պատերի վրա երեսպատված պլաստիկի քանդում	100մ²	0,154	50,0	7,70
2	Գոյություն ունեցող լվացարանի ապամոնտաժում	հատ	1	1,0	1,00
3	Գոյություն ունեցող զուգարանակոնքի ապամոնտաժում	հատ	1	1,0	1,00
4	Գոյություն ունեցող դռան բացվածքներում պատի կառուցում d=100մմ հաստությամբ	մ³	0,38	35,0	13,30
5	d=100մմ կառուցվող պատի ամրանավորում (ուղղահայաց և հորիզոնական) ամրան A240C 8մմ	տն	0,005	400,0	2,00
6	Զուգարանակոնքի տեղադրում	կ-տ	1	60,0	60,00
7	Լվացարանի տեղադրում ոտնակով	կ-տ	1	40,0	40,00
8	Հոսակի տեղադրում	հատ	1	5,0	5,00
9	Լվացարանի փականի տեղադրում	հատ	1	5,0	5,00

10	Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում d=20*2.0մմ, pn10, փորձարկումով	մ	18	1,3	23,40
11	Հաղորդալար պղնձե, ՊՎՔ մեկուսացումով , կտրվածքը ՝ 3*2.5մմ² ՈՊՎ	100մ	0,40	60,0	24,00
12	Ջահի տեղադրում՝ 5 մոմանոց, 7Վտ	հատ	2	30,0	60,00
13	Արտասահմանյան տիպի առաստաղի լուսադիոդային լուսատուի տեղադրում 18Վտ	լրա կազմ	3	8,5	25,50
14	Արտասահմանյան տիպի ներկառուցվող առաստաղի լուսադիոդային լուսատուի տեղադրում 9Վտ	լրա կազմ	2	3,0	6,00
15	Արտասահմանյան տիպի պատի լուսադիոդային լուսատուի տեղադրում 18Վտ, 1800լմ	լրա կազմ	1	5,0	5,00
16	Միաստեղ միաբևեռ անջատիչի տեղադրում	հատ	5	1,5	7,50
17	Երկբևեռ վարդակի տեղադրում, ներքին տեղադրման	հատ	6	1,5	9,00
18	Տուփ վարդակների և անջատիչների տեղադրման	100հատ	0,11	50,0	5,50
	Ջեռուցման համակարգ				
1	Պոլիպրոպիլենային խողովակի տեղադրում d=25մմ (տաք ջրի համար PN20)	մ	5	3,0	15,00
2	Պոլիպրոպիլենային խողովակի տեղադրում d=20մմ (տաք ջրի համար PN20)	մ	32	2,0	64,00
3	Ալյումինե մարտկոցների տեղադրում H=500մմ-147կկալ/ժ	էկմ	15,5	0,88	13,64
		սեկց.	46	4,2	193,20
4	Մարտկոցների համար խցան արտաթող ծորակի տեղադրում d=15մմ	կոմպ-լեկտ	5	5,0	25,00
5	Անցքերի բացում միջնորմներում 10սմ	հատ	3	0,5	1,50
6	Անցքերի բացում պատերում 50սմ	հատ	1	1,0	1,00
7	Ջրի մաքրման զտիչի տեղադրում d=25մմ	հատ	2	1,5	3,00
8	Պոլիպրոպիլենային փականի տեղադրում d=25 մմ	հատ	2	4,0	8,00
9	Դատարկաման ծորակի տեղադրում d=20մմ	հատ	2	6,0	12,00
10	Ծխաօդատար անցքի բացում 40սմ, d=125մմ	հատ	1	1,5	1,50
11	Կարգավորող փականի տեղադրում d=20մմ	կոմպ-լեկտ	10	2,0	20,00
12	Կաթսայի տեղադրում 24կՎտ (փակ այրման խցով)	հատ	1	394,0	394,00
13	Գազի կաթսայի ծխատար խողովակ	հատ	1	3,0	3,00
14	Անցում պոլիպրոպիլենային 25/20	հատ	2	0,07	0,14

15	Եռաբաշխիչ պոլիպրոպիլենային 25*25*25մմ	հատ	2	0,17	0,34
16	Անկյունակ պոլիպրոպիլենային d=20մմ	հատ	14	0,07	0,98
17	Մարտկոցների կախիչ	հատ	20	0,6	12,00
18	Խողովակների ամրացման պլաստմասե շրջակապ d=25մմ	հատ	2	0,07	0,14
19	Խողովակների ամրացման պլաստմասե շրջակապ d=20մմ	հատ	96	0,05	4,80
20	Խողովակների մեկուսացում հանքաբամբակե ներքնակով h=5 սմ (առանց հանքաբամբակի արժեքի)	մ³	0,03	30,0	0,90
21	Հանքաբամբակ ֆոլգայով	մ²	0,6	0,68	0,41
22	Մեկուսապատվածքի փաթաթում հանքաբամբակե ներքնակով պատված ալյումինե թիթեղով	100մ²	0,012	340,0	4,08
23	Պողպատե պաշտպանիչ պատյան d=32*3մմ	մ	1,2	2,0	2,40
24	Մետաղական պաշտպանիչ պատյանների յուղաներկում (2 անգամ)	100մ²	0,01	100,0	1,00
25	Անցքերի վերականգնում Վ - 15 դասի բետոնով	մ³	0,03	135,5	4,07
	Ընդամենը				**4799,540**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ»
համայնքային կառավարչական հիմնարկ
հ.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
հ/հ900252101440
ՀՎՀՀ 06954104

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Լիմհերթ»ՍՊԸ
ք.Ստեփանավան Ռաֆֆի 12
ԱՇԲ Ստեփանավանի մ/ճ
հ/հ2471400577270010
ՀՎՀՀ07203843

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«30 » մարտի 2022 թ. կնքված
ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-22/01 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ Հ.ՄԵՂԱՊԱՐՏԻ ՓՈՂՈՑԻ 8 ՇԵՆՔԻ ԹԻՎ 18 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Հ.Մեղապարտի փողոցի 8 շենքի թիվ 18 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, հասարակական նշանակության տարածքի հիմնանորոգման աշխատանքներ	Պայմանագիրը կնքելու օրվանից	մինչև 30 օրացուցայի օրը ներառյալ
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ»
համայնքային կառավարչական հիմնարկ
հ.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
հ/հ900252101440
ՀՎՀՀ 06954104

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Լիմհերթ»ՍՊԸ
ք.Ստեփանավան Ռաֆֆի 12
ԱՇԲ Ստեփանավանի մ/ճ
հ/հ2471400577270010
ՀՎՀՀ07203843

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«30 » մարտի 2022 թ. կնքված
ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-22/01 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45261167	ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Հ.Մեղապարտի փողոցի 8 շենքի թիվ 18 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, հասարակական նշանակության տարածքի հիմնանորոգման աշխատանքներ				4799540	4799540	4799540	4799540	4799540	4799540	4799540	4799540	**4799540**	**4799540**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ»
համայնքային կառավարչական հիմնարկ
հ.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
h/h900252101440
ՀՎՀՀ 06954104

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Լիմիերթ»ՍՊԸ
ք.Ստեփանավան Ռաֆֆի 12
ԱՇԲ Ստեփանավանի մ/ճ
h/h2471400577270010
ՀՎՀՀ07203843

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
«30 » մարտի 2022 թ. կնքված
ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-22/01 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«30 » մարտի 2022 թ. կնքված
ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-22/01 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն